ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

No 37-Ա «11» սեպտեմբերի 2019 թ.

«ԵՐԵՎԱՆՈՒՄ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ ՄԱՐԶԱԲՆԱԿ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻՆ» ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի թիվ 661-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կանոնադրության 19-րդ կետի 1-ին ենթակետով՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի 1111 «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության ծրագիր» ծրագրի 12007 «Երևանում բարձրագույն կրթության հասանելիության ապահովում մարզաբնակ ուսանողներին» միջոցառման իրականացման գործընթացը կանոնակարգելու նպատակով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել.

1) «Երևանում բարձրագույն կրթության հասանելիության ապահովում մարզաբնակ ուսանողներին» ծրագրի իրականացման կարգը՝ համաձայն հավելված 1-ի,

2) Կեցության ծառայությունների դիմումի ձևը՝ համաձայն հավելված 2-ի,

3) «Երևանում բարձրագույն կրթության հասանելիության ապահովում մարզաբնակ ուսանողներին» ծրագրից օգտվող ուսանողների ցանկի ձևը՝ համաձայն հավելված 3-ի,

4) «Երևանում բարձրագույն կրթության հասանելիության ապահովում մարզաբնակ ուսանողներին» ծրագրի իրականացման հաշվետվության ձևը՝ համաձայն հավելված 4-ի:

5) «Երևանում բարձրագույն կրթության հասանելիության ապահովում մարզաբնակ ուսանողներին» ծրագրի շրջանակներում կեցության ծառայություններ մատուցող անձի և ուսանողների (ասպիրանտների) միջև կնքվող կեցության ծառայությունների մատուցման պայմանագրի օրինակելի ձևը՝ համաձայն հավելված 3-ի:

2. Սահմանել, որ սույն հրամանի 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված «Երևանում բարձրագույն կրթության հասանելիության ապահովում մարզաբնակ ուսանողներին» ծրագրի իրականացման կարգը, 2-րդ ենթակետով հաստատված Կեցության ծառայությունների դիմումի ձևը և 5-րդ ենթակետով հաստատված կեցության ծառայությունների մատուցման պայմանագրի օրինակելի ձևը Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության կողմից թարգմանչի որակավորում ստացած անձի կողմից ենթակա է թարգմանության առնվազն ռուսերեն և անգլերեն լեզուներով, ինչպես նաև դրանց հայերեն, ռուսերեն և անգլերեն տարբերակները ենթակա են հրապարակման Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության և «Երևանում բարձրագույն կրթության հասանելիության ապահովում մարզաբնակ ուսանողներին» ծրագրի շրջանակներում կեցության ծառայություններ մատուցող անձի պաշտոնական կայքում, ինչպես նաև պետք է փակցված լինի վերջինիս հայտարարությունների համար նախատեսված վայրում:

ԱՐԵՎԻԿ ԱՆԱՓԻՈՍՅԱՆ
/պարտականությունները կատարող/

Invalid signature

X

ԱՐԵՎԻԿ ԱՆԱՓԻՈՍՅԱՆ

Signed by: ANAPIOSYAN AREVIK 6905860212

Հավելված 1
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի
2019 թվականի սեպտեմբերի –ի N հրամանի

ԿԱՐԳ
«ԵՐԵՎԱՆՈՒՄ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ ՄԱՐԶԱԲՆԱԿ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻՆ» ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

1. Սույն կարգով սահմանվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով նախատեսված «Երևանում բարձրագույն կրթության հասանելիության ապահովում մարզաբնակ ուսանողներին» ծրագրով (այսուհետ՝ ծրագիր) կեցության ծառայություններ մատուցող անձի (այսուհետ՝ կազմակերպություն) և Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության (այսուհետ՝ նախարարություն) միջև կնքված պայմանագրի շրջանակներում Ծրագրից օգտվողների ցանկը հաստատելու, կեցության վճարների փոխհատուցման և կազմակերպության կողմից տրամադրվող զեղչերի կիրառման գործընթացը:

2. Ծրագրի շահառու կարող են հանդիսանալ Երևան քաղաքի բուհերում ուսումնառող Հայաստանի Հանրապետության մարզաբնակ և օտարերկրյա ուսանողներն ու ասպիրանտները (օրդինատորները), ինչպես նաև միջպետական համաձայնագրով բարձրագույն և հետբուհական կրթություն ստացող ուսանողները (այսուհետ՝ ուսանողներ):

3. Ծրագրի իրականացման նպատակով կազմակերպության և նախարարության միջև յուրաքանչյուր տարի կնքվում է համապատասխան պայմանագիր, որով սահմանվում է ծրագրի շրջանակներում կազմակերպությանը փոխհատուցվող գումարի առավելագույն չափը, ծրագրից օգտվող ուսանողների առվելագույն թիվը, կեցության ծառայություններին ներկայացվող նվազագույն պահանջները, կազմակերպության կողմից տրամադրվելիք զեղչերով տեղերի առավելագույն քանակը և այլն:

4. Ծրագրի շրջանակներում ուսանողների կողմից վճարման ենթակա կեցության ծառայությունների վճարի չափը որոշվում է ծրագրի իրականացման շրջանակներում կազմակերպություն և նախարարության միջև կնքված պայմանագրով, որը չի կարող փոխհատուցվող գումարից ավելի լինել (բացառությամբ կոմունալ վճարների, որոնց

մեծության հաշվարկման համար կազմակերպությունը պարտավոր է ապահովել համապատասխան սարքավորումների կիրառումը): Ընդ որում՝ կազմակերպությունը պարտավոր է տրամադրել պայմանագրով նշված քանակով անձանց կեցության ծառայությունների վճարների զեղչեր հետևյալ չափով.

4.1 կեցության վճարի 100% զեղչ տրվում է՝

1) միջպետական համաձայնագրերի շրջանակներում ուսումնառող ուսանողներին (ըստ միջպետական համաձայնագրերի),

2) երկկողմանի ծնողազուրկ ուսանողներին,

3) հաշմանդամության առաջին և երկրորդ կարգ ունեցող ուսանողներին,

4.2. կեցության վճարի 50% փոխհատուցում տրվում է՝

1) միակողմանի ծնողազուրկ ուսանողներին,

2) սոցիալապես անապահով ընտանիքների (ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված անապահովության «30.00» միավորից բարձր անապահովության միավոր ունեցող ընտանիքների) անդամ հանդիսացող ուսանողներին,

3) հաշմանդամության երրորդ կարգ ունեցող ուսանողներին,

4) 2016 թվականի ապրիլի 2-6-ը ընկած ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետության զինված ուժերում մարտական հերթապահություն իրականացրած (զինվորական գրքույկում համապատասխան նշման առկայությամբ) կամ մարտական գործողություններին մասնակցած ուսանողներին:

5. Սույն կարգի 4-րդ կետում նշված զեղչերից տարբերվող կամ այդ կետում նշված խբերում չներառված անձանց համար զեղչեր կարող են տրամադրվել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի միջնորդությամբ:

6. Սույն կարգի 4-րդ կետում նշված պայմաններից մեկից ավելիին բավարարման դեպքում կիրառում է ուսանողի համար առավել բարենպաստ պայմանը (այն պայմանը, որով նախատեսված փոխհատուցումն ավելի մեծ է):

7. Սույն կետի 4.1 ենթակետի 1-ին մասում նշված զեղչի տրամադրման համար հիմք է հանդիսանում կազմակերպությանն ուղղված նախարարության գրությունը, իսկ սույն կետի 4.1 ենթակետի մյուս մասերի և սույն կետի 4.2 ենթակետերում նշված զեղչերի համար՝ համապատասխան հիմնավորող փաստաթղթերը:

8. Ծրագրից օգտվող ուսանողների ցանկը կազմելու համար ուսանողները պարտավոր են մինչև սեպտեմբերի 20-ը կազմակերպություն ներկայացնել դիմում՝ դրանում կցելով բուհ-ում ուսումնառելու փաստը հավաստող փաստաթուղթ (տեղեկանք բուհ-ից):

9. Ծրագրից օգտվող ուսանողների ցանկը կազմելու համար կազմակերպությունը սույն կարգի 8-րդ կետում նշված ժամկետների ավարտից հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում նախարարություն է ներկայացնում կարգի 7-րդ և 8-րդ կետերում նշված փաստաթղթերը և դրանց հիման վրա կազմված ամփոփ տեղեկատվությունը, որոնք համադրելով նախարարությունում առկա տեղեկատվության հետ՝ նախարարության կազմակերպատնտեսական վարչության կողմից կազմում և նախարարության բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության, արտաքին կապերի և սփյուռքի, ֆինանսաբյուջետային վարչությունների հետ համաձայնեցնելուց հետո Ծրագրից օգտվող ուսանողների ցանկն ուղարկվում է կազմակերպությանը:

10. Ծրագրից օգտվող ուսանողների ցանկը կազմելիս հաշվի են առնվում հետևյալ սկզմունքները.

10.1. Ծրագրից օգտվող ցանկացող ուսանողների թիվը Նախարարության և կազմակերպության միջև կնքված պայմանագրով նախատեսված թվից ավելի լինելու դեպքում Ծրագրից օգտվելու առաջնահերթությունը որոշվում է հետևյալ հերթականությամբ.

10. 1.1 ծրագրից արդեն օգտվող ուսանողներ,

10. 1.2 միջպետական համաձայնագրերի շրջանակներում ուսումնառող ուսանողներ,

10. 1.3 ինստիտուցիոնալ հավատարմագրում ունեցող բուհերի ուսանողներ,

10. 1.4 առավել հեռավոր փաստացի բնակության վայր ունեցող ուսանողներ:

10.2 Ծրագրից արդեն օգտվող ուսանողներին կարելի է ցանկից հանել հետևյալ դեպքերում.

10. 2.1 ուսանողը կորցրել է ուսանողի իր կարգավիճակը,

10. 2.2 ուսանողն ունի ավելի քան երեք ամսվա վարձավճարի կամ կոմունալ վճարների կետանց պարտավորություն,

10. 2.3 ուսանողը կազմակերպության ներքին կարգապահական կանոնների համաձայն զրկվել է կեցության ծառայություններից,

10. 2.4 ուսանողը հրաժարվել է կազմակերպության ծառայություններից:

11. Ծրագրից օգտվող ուսանողների ցանկը կազմելիս նախարարությունը կարող է որոշ քանակի տեղեր որոշակի ժամանակահատվածի համար ներկայացնել կանխատեսումներով՝ հաշվի են առնելով միջպետական համաձայնագրերով տվյալ տարվա համար ստանձնած պարտավորությունները:

12. Սույն կարգի 8-րդ կետում նշված ժամկետներից դուրս Ծրագրից օգտվելու ցանկություն ունեցող ուսանողներին Ծրագրից օգտվելու հարցը քննարկում է Նախարարությունը սույն կարգի 9-րդ կետում նշված կարգով:

13. Կազմակերպությունը մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 20-ը նախարարությանը ներկայացնում է հաշվետվություն Ծրագրից օգտվող անձանց, նրանց կողմից վճարված և զեղչված գումարների մասին:

14. Նախարարության կազմակերպատնտեսական վարչությունը սույն կարգի 13-րդ կետում նշված հաշվետվությունը ստանալուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնում է եզրակացություն ներկայացված հաշվետվության վերաբերյալ:

15. Նախարարության ֆինանսաբյուջետային վարչությունը սույն կարգի 9-րդ կետում նշված հաշվետվության և սույն կարգի 14-րդ կետում նշված եզրակացության հիման վրա կազմում և ստորագրման է ներակայացնում վճարման հայտը, որը հիմք ընդունելով նախարարության գնումների և հաշվապահական հաշվառման վարչությունն օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնում է վճարումը:

Հավելված 2
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի
2019 թվականի սեպտեմբերի –ի N հրամանի

ՁԵՎ

ԴԻՄՈՒՄ
ԿԵՑՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍՏԱՆԱԼՈՒ

. . . . . .
. . . . . .
. . . . . .
.

. . . . . .
. . . . . .
. . . . . .
Կեցության ծառայություններ մատուցող անձի (կազմակերպության) անվանումը

. . . . . .
. . . . . .
. . . . . -ին
Կազմակերպության ղեկավարի պաշտոնը, անունը, ազգանունը

. . . . . .
. . . . . .
. . . . . .

. . . . . .
. . . . . .
. հասցեի բնակիչ
Դիմումատուի բնակության հասցեն

. . . . . .
. . . . . .
. . . . . -ից
Դիմումատուի անունը, հայրանունը, ազգանունը

Ծանոթանալով ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2019 թվականի օգոստոսի . . . . . -ի թիվ . . . . . հրամանով հաստատված «Երևանում բարձրագույն կրթության հասանելիության ապահովում մարզաբնակ ուսանողներին» ծրագրի իրականացման կարգին և
. . . . . .
. . . . . .
. . . . .

. . . . . .
. . . . . -ի
կողմից մատուցվող կեցության
Կեցության ծառայություններ մատուցող անձի (կազմակերպության) անվանումը
ծառայությունների պայմաններին՝ խնդրում եմ ինձ ընդգրկել «Երևանում բարձրագույն կրթության հասանելիության ապահովում մարզաբնակ ուսանողներին» ծրագրից օգտվող ուսանողների ցանկում:

Սույն դիմումով տեղեկացնում եմ, որ հանդիսանում եմ . . . . . .
. . . . . -ի
. . . . . .
. . . . . -ի
բուհի անվանումը ֆակուլտետի /բաժնի/ անվանումը
. . . . . .
. . . . . -ի . . . . . կուրսի ուսանող:
բակալավրիատ, մագիստրատուրա, օրդինատուրա

Միաժամանակ հավակնում եմ օգտվել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2019 թվականի օգոստոսի . . . . . -ի թիվ . . . . . հրամանով հաստատված «Երևանում բարձրագույն կրթության հասանելիության ապահովում մարզաբնակ ուսանողներին» ծրագրի իրականացման կարգի 4-րդ կետով նախատեսված հետևյալ զեղչ(եր)ից.

կեցության վճարի 100% զեղչ, որը տրամադրվում է.

☐ միջպետական համաձայնագրերի շրջանակներում ուսումնառող ուսանողներին (ըստ միջպետական համաձայնագրերի),

☐ երկկողմանի ծնողազուրկ ուսանողներին,

☐ հաշմանդամության առաջին և երկրորդ կարգ ունեցող ուսանողներին,

կեցության վճարի 50% զեղչ, որը տրամադրվում է.

☐ միակողմանի ծնողազուրկ ուսանողներին,

☐ սոցիալապես անապահով ընտանիքների (ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված անապահովության «30.00» միավորից բարձր անապահովության միավոր ունեցող ընտանիքների) անդամ հանդիսացող ուսանողներին,

☐ հաշմանդամության երրորդ կարգ ունեցող ուսանողներին,

☐ 2016 թվականի ապրիլի 2-6-ը ընկած ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետության զինված ուժերում մարտական հերթապահություն իրականացրած (զինվորական գրքույկում համապատասխան նշման առկայությամբ) կամ մարտական գործողություններին մասնակցած ուսանողներին:

Կից ներկայացնում եմ

1

. . . . . .

. . . . . .

. . . . . .

անձը հավաստող փաստաթուղթի (անձնագիր, իսկ նույնականացման քարտի դեպքում՝ նաև տեղեկանք բնակության վայրից) պատճենը

2

. . . . . .

. . . . . .

. . . . . .

բուհ-ում ուսումնառելու փաստը հավաստող փաստաթուղթը (ուսանողական գրքույկ կամ տեղեկանք բուհ-ից)

3. . . . . .

. . . . . .

. . . . . .

. . . . . .

. . . . . .

. . . . . .

զեղչ(եր)ից օգտվելու համար հիմք հանդիսացող փաստաթղթերը

Դիմող՝ .....
անուն, ազգանուն, ստորագրություն

.... 20 ..... թ.

Հավելված 3
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի
2019 թվականի սեպտեմբերի –ի N հրամանի

ՁԵՎ

ՑԱՆԿ

«ԵՐԵՎԱՆՈՒՄ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ ՄԱՐԶԱԲՆԱԿ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻՆ»

ԾՐԱԳՐԻՑ ՕԳՏՎՈՂ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ

Հ/հ	Ուսանողի անուն, ազգանուն, հանրանունը	Բնակության հասցեն	Բուհը	Ֆակուլտետը / բաժինը	կուրսը	Ծրագրից օգտվելու առաջնահերթությունը որոշելու համար հիմք հանդիսացող կետը՝ ըստ կարգի	կեցության վճարի զեղչի չափը՝ %	զեղչի կիրառման համար հիմք հանդիսացող կետը՝ ըստ կարգի

Հավելված 4
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի
2019 թվականի սեպտեմբերի –ի N հրամանի

ՁԵՎ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«ԵՐԵՎԱՆՈՒՄ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ ՄԱՐԶԱԲՆԱԿ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻՆ»

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ (20. . . . -րդ եռամսյակի համար)

Հ/հ	Ուսանողի անուն, ազգանուն, հանրանունը	Բնակության հասցեն	Բուհը	Ֆակուլտետը / բաժինը	կուրսը	կեցության ծառայությունների վճարի չափը՝ ՀՀ դրամ	կեցության վճարի զեղչի չափը՝ %	զեղչի կիրառման համար հիմք հանդիսացող կետը՝ ըստ կարգի
Ընդամենը								

20. . . . թվականի . . . . . -րդ եռամսյակի ընթացքում ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2019 թվականի օգոստոսի . . . . . -ի թիվ . . . . . հրամանով հաստատված «Երևանում բարձրագույն կրթության հասանելիության ապահովում մարզաբնակ ուսանողներին» ծրագրի շրջանակներում կեցության ծառայություններ են մատուցվել միջին ամսեկան . . . . . թվով ուսանողների, որոնցից . . . . . -ին տրամադրվել է կեցության վճարի 100% զեղչ, ... -ին՝ կեցության վճարի 50% զեղչ:

Հաշվետու ժամանակաշրջանում ուսանողների միջին [illegible] ավելացել/պակասել է . . . . . -ով, որը պայմանավորված է հետևյալով.

նախարարության միջնորդությամբ ուսանողների քանակն ավելացել է . . . . . -ով,

կորցրել է ուսանողի իր կարգավիճակը . . . . ուսանող,

ավելի քան երեք ամսվա վարձավճարի կամ կոմունալ վճարների կետանց պարտավորություն ունենալու հիմքով զրկվել է կեցության ծառայություններից . . . . ուսանող,

կազմակերպության ներքին կարգապահական կանոնների համաձայն . . . . . ուսանող,

հրաժարվել է կազմակերպության ծառայություններից . . . . . ուսանող:

. . . . . .

Կեցության ծառայություններ մատուցող անձի (կազմակերպության) անվանումը

. . . . . .

. . . . . .

Կազմակերպության ղեկավարի պաշտոնը, անունը, ազգանունը ստորագրությունը

Հավելված 5
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի
2019 թվականի սեպտեմբերի –ի N հրամանի

ՁԵՎ

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N
ԿԵՑՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ

ք. Երևան «_____»
_____20 թ.

_____-ը,
(ուսանողի անունը, հայրանունը, ազգանունը)
այսուհետ՝ «Պատվիրատու», մի կողմից, և _____
_____,
(կազմակերպության անվանումը)
այսուհետ՝ «Կատարող», ի դեմս _____-ի,
(պաշտոնը, անունը, ազգանունը)
որը գործում է _____ հիման վրա, մյուս կողմից, կնքեցին սույն
(կանոնադրության, լիազորագրի կամ այլնի)
պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրով՝ Կատարողը պարտավորվում է Պատվիրատուի հանձնարարությամբ մատուցել սույն պայմանագրի 1.2. կետում նշված ծառայությունները, իսկ Պատվիրատուն պարտավորվում է վճարել այդ ծառայությունների համար:

1.2. Կատարողը պարտավորվում է մատուցել կեցության ծառայություններ (այսուհետ՝ «Ծառայություններ»)՝ ըստ ներքոհիշյալ բնութագրիչների,

1.2.1. Կեցության համար նախատեսված շենք(եր)ը (շինություն(ներ)ը) պետք է տեղակայված լինեն Երևան քաղաքում, կենտրոնից /Հանրապետության հրապարակից/ 10 կմ-ից ոչ ավելի հեռավորության վրա,

1.2.2. Պետք է մատչելի լինեն հասարարական տրանսպորտի համար /գործող երթուղային ցանցով միկրոավտոբուսային, ավտոբուսային և տրոլեյբուսային առնվազն 10 երթուղու կանգառների հեռավորությունը՝ առավելագույնը 300մ/, իսկ մոտակայքում /առավելագույնը 500մ հեռավորության վրա/ պետք է գործի մթերային խանութ և դեղատուն,

1.2.3. Սենյակի ընդհանուր մակերեսը պետք է լինի առնվազն 16,2 ք/մ նախատեսված առավելագույնը երկու ուսանողի համար: Սենյակը պետք է լինի կահավորված առնվազն՝

- մահճակալով՝ երկու հատ,
- ակողնային պարագաներով՝ երկու լրակազմ,
- կողապահարանով՝ երկու հատ,

- զգեստապահարանով՝ մեկ հատ
- գրասեղանով՝ մեկ հատ
- աթոռներով՝ երկու հատ:

Սենյակում պետք է լինի լվացարան՝ շուրջօրյա ջրամատակարարմամբ:

1.2.4. Համապատասխան պարագաներով կահավորված սանհանգույցի առկայություն յուրաքանչյուր սենյակում առնվազն մեկ հատ կամ շենքի /շինության/ յուրաքանչյուր հարկում առնվազն վեց հատ:

1.2.5. Համապատասխան կահավորմամբ լվացքատան և լողասենյակների առկայություն:

1.2.6. Շենքի /շինության/ յուրաքանչյուր հարկում խոհանոցի առկայություն. հագեցվածությունը՝ գազոջախ /կամ համարժեք/, սառնարան, լվացարան:

1.2.7. Շենքի /շինության/ սանիտարա-հիգենիկ պայմանների ապահովում: Ջեռուցման սեզոնին պետք է կենտրոնացված կամ այլ եղանակով ջեռուցվեն շենքի /շինության/ բոլոր սենյակները: Շուրջօրյա պահակային ծառայության ապահովում /նաև՝ տեսախցիկներով անվտանգության համարգի առկայություն/, ուսանողների գրանցամատյանի վարում, երեկոյան ժամերին՝ հյուրերի մուտքի և ելքի վերահսկողություն:

Շենքը /շինությունը/ պետք է հագեցած լինի հրշեջ պահարաններով /վահանակներով/, ուսանողներին պետք է տրամադրվի անվճար ինտերնետ կապի հնարավորություն, Պահակակետը պետք է հագեցված լինի նաև անհետաձգելի բուժօգնության դեղերի և պարագաների հավաքածուով:

1.3. Ծառայությունների մատուցման կատարման ժամկետն է՝ «01» սեպտեմբերի 20 թ.-ից մինչև «01» օգոստոսի 20 թ.:

2. Կողմերի իրավունքները և պարտականությունները

2.1. Կատարողը պարտավոր է՝

2.1.1. Ծառայությունները մատուցել պատշաճ որակով,

2.1.2. Ծառայությունները մատուցել ամբողջ ծավալով, սույն պայմանգրի 1.3. կետում նշված ժամկետում,

2.1.3. Պատվիրատուի պահանջով երեք օրվա ընթացքում անհատույց վերացնել հայտնաբերված բոլոր թերությունները,

2.1.4. անձամբ մատուցել Ծառայությունները:

2.2. Պատվիրատուն պարտավոր է,

2. 2. 1. Պահպանել կատարողի կողմից սահմանած ներքին կարգապահական կանոնները, սանիտարահիգենիկ և հակահրդեհային կանոնները:

2. 2. 2. Խնամքով վերաբերվել կատարողի տրամադրած գույքին:

2. 2. 3. Կատարողին հատուցել իր կողմից կամ իր մեղքով Կատարողին հասցված վնասը ամբողջ ծավալով:

2. 2. 4. .Պայմանագրում նշված ժամկետում ազատել սենյակը՝ պատշաճ վիճակում:

2. 2. 5. Ծառայությունների դիմաց վճարել սույն պայմանգրի 3-րդ կետում նշված գնին համապատասխան մինչև յուրաքանչյուր ամսվա 10-ը նախորդ ամսվա ծառայության համար, ինչպես նաև իր կոմունալ վճարները:

2.3. Պատվիրատուն իրավունք ունի՝

2.3.1. ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի Ծառայությունների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու նրա գործունեությանը.

2.3.2. ցանկացած ժամանակ հրաժարվել պայմանագիրը կատարելուց՝ Կատարողին վճարելով սահմանված գնի այն մասը, որը համապատասխանում է մինչև պայմանագրի կատարումից Պատվիրատուի հրաժարման մասին տեղեկություն ստանալը մատուցված Ծառայությունների չափին:

3. Պայմանագրի գինը և վարձատրությունը

3.1. Սույն պայմանագրի գինը կազմում է՝ _____ դրամ,
(թվերով և բառերով)
որը, համաձայն ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2019 թվականի օգոստոսի –ի N հրամանի՝ ենթակա է զեղչման _____ %-ով:
(թվերով և բառերով)

3.2. Պատվիրատուի կողմից Կատարողին պայմանագրային գինը վճարվում է սույն պայմանգրում նշված Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով կամ կանխիկ՝ ՀՀ կառավարության 2017 թվականի հոկտեմբերի 5-ի N 1260-Ն որոշմամբ սահմանված դրամարկղային գործառնությունների իրականացման, դրանց փաստաթղթավորման, դրամարկղային գրքի գրանցման և դրամարկղային գրքի վարման կարգին համապատասխան:

4. Կողմերի պատասխանատվությունը

4.1. Սույն պայմանագրի 2. 2 կետում նշված ժամկետը խախտելու համար Պատվիրատուն Կատարողին վճարում է տույժ՝ կետանցի յուրաքանչուր օրվա համար 0,5 տոկոսի չափով:

4.2. Տույժի վճարումը Պատվիրատուին չի ազատում իր պարտավորությունները կատարելու պատասխանատվությունից:

5. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքկան հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

6. Վեճերի լուծման կարգը

Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերի լուծումը հանձնվում է դատարանի քննությանը:

7. Եզրափակիչ դրույթներ

7.1. Սույն պայմանագրում ցանկացած փոփոխություն և լրացում վավեր է այն պայմանով, եթե դրանք կատարված են գրավոր և ստորագրված՝ Կողմերի կողմից: Սույն պայմանագրի հավելվածները դրա անբաժանելի մասն են:

7.2. Սույն պայմանագիրը կազմված է հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող երկու օրինակից: Յուրաքանչուր կողմի մոտ գտնվում է պայմանագրի մեկական օրինակ:

8. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Պատվիրատու	Կատարող
_____	_____
(ազգանունը, անունը, հայրանունը)	(անվանումը)
_____	_____
(հասցեն)	(իրավաբանական հասցեն)
_____	_____
անձնագրի սերիան, ե՞րբ, և ու՞մ կողմից է տրվել	(բանկային վավերապայմանները)
_____	Տնօրեն՝ _____
(ստորագրությունը)	(ազգանունը, անունը)
	_____
	(ստորագրությունը)
	Կ. Տ.